բարձուքը, բայց այնքան քիչ են ցանում, որ արտահանութեան կարիք չի լինում։

Կրօնափոխութիւնը, լեզուի փոփոխութիւնը Տայեցի կալուածատէր իշխանի համար տարազի նման է եղել, հետեւել է իշխողներին, բայց ո՛չ մի կրօն այնտեղ հիմունք չէ գտել. նա միմիայն հպատակութեան ձեւ է, ուրիշ ոչինչ։ Կրօնական համոզումները եւ հաւատալիքները չեն քարացել կամ ամրացել Կիսկիմում, այլ ծիսականութեան ձեւեր են դարձել։ Այսօրուան խալամացած եւ թրքախօս ժողովուրդը աւելի ջրապաշտ եւ արեւապաշտ ժողովուրդ է, աւելի մեծ յարգանք է տալիս սրանց պարարտացրած եւ կենդանացրած հողին, քան թէ Ղուրանի պատուիրաններին։

Պահլաւ, Բագրատունի, Կամսարական, Մամիկոնեան եւ բոլոր իշխանական տները տքնում էին ժողովրդին անպայման քրիստոնէացնել, նրանց գաղափարական քրիստոնեայ դարձնել, որ կարողանան հոմէական կալուածատիրական օրէնքներն ու կարգերը գործադրել, բայց բնակչութիւնը հակառակ էր հոմէական կալուածատիրական բոլոր կարգերին. ձգտում էր ունենալ պարսկական զրադաշտական կրօնը, քանի որ վերջինս գեղացու — երկրամշակի հողի վրայ ունեցած իրաւունքներն էր պաշտպանում եւ ստիպում էր իշխանութեանը հողից միմիայն մի տասներորդը պետական հարկ վերց-